ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
2026 թվականի հունիսի 11 թիվ 202-Ա

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՓԱՐՊԻԻ Ղ.ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Վ. Պետրոսյանի 2026 թվականի հունիսի 10-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վարդան Պետրոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հունիսի 15-ից հուլիսի 17-ը ներառյալ:

2.Վարդան Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել տնօրենի պարտականությունները կատարող Լիլիթ Գյոզալյանի վրա:

3.Վարդան Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հուլիսի 20-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 6/11/2026 17:06:45 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հունիսի 11
ք. Աշտարակ